ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի 2017թ-ի հունվարի 1-ից մինչև 2017թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

2017թ-ի տարեսկզբին Մարգարայի գյուղապետարանը կազմել է գյուղապետարանի 2017թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու քննարկմանը, որը հաստատվել է ավագանու կողմից, որով և առաջնորդվում եմ:

2017թ-ի բյուջեն կազմում է 29100,0 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու սոց վճարների, պարտքեր չունենք:

2017թ-ի **տարեվերջի** դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել 28573.0 հազար դրամ այդ թվում՝

1. հողի հարկ 3200.0 հազար դրամ 100 %
2. գույքահարկ 1800.0 հազար դրամ 100%
3. վարձակալական հողի հարկ 1300.0 հազար դրամ 100%
4. դոտացիա 21635.7 հազար դրամ 100,0%
5. Այլ մուտքեր 637.3 հազար դրամ 85,0%

2017թ-ի ընթացքում ծախսվել է 27298.0 հազար դրամ այդ թվում՝

1. Աշխատավարձ 12900.0 հազար դրամ
2. Սոցիալական ծախսեր 100,0 հազար դրամ
3. Ապրանքներ և նյութեր ֆոնդ բյուջեյից
4. Այլ ծառայություններ 14298.0 հազար դրամ

2017 թ-ի **տարեվերջին** բյուջեյի ընթացիկ հաշիվներում ունենք 50000 դրամ գումար:

2017 թվականի ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 9 ավագանու նիստ 26 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 07 որոշում և 5 կարգադրություն, մուտքագրվել է150 գրություն, ելք է արվել 95գրություն:

2017թ-ի ընթացքում կատարվել է ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Ցուցաբերվել է 100,000/հարյուր հազար հազար/ դրամ սոցալական օգնություն համայնքի անապահով մեկ բնակչին:
2. «Մերձափնյա» ՁՕԸ-ին աջակցություն է ցուցաբերվել, ջրատարների մաքրման և ջրի վարձի հավաքագրման աշխատանքներին:
3. Սահմանապահների օրվա կապակցությամբ համայնքի տարածքում գտնվող հայկական ռուսական զորամասերին ֆինանսական օգնություն է տրամադրվել 150.000 /հարյուր հիսուն հազար/ դրամ:

4. Վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել, 100,000 /հարյուր հազար/ դրամ, 2017թ-ի շրջանավարտներին:

5. Գարնան ամիսներին կատարվել են ծառատունկ և կանաչապատման աշխատանքներ:

6. Մարգարայի գյուղապետարանը մաքուր Հայաստան ծրագրի շրջանակներում կազմակերել է աղբահանման և ճանապարհների բարեկարգման ավազապատման աշխատանքներ:
7. 2017թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Մարգարա համայնքի կաղմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին Արմավիրի Զին-կոմիսարիատ ներկայացնելու համար:

8. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնություն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել

փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք

բերման համար:

9. Մարգարա համայնքի գերեզմանատանը անց է կացվել ջրագիծ :

Հրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը, ինչպես նաև 1.5 կմ խմելաջրի ցանցի կառուցումը :

Մարգարա համայնքի
ղեկավար՝ / Խ.Ասատրյան /